


ՀԱՅՐԵՆՈՒԹՅՈՒՆ**ԿՈԹՈՂԸ**

Ոտքերիս տակ, խորունկ ծորում գալարւում է մի բարակ զետ,
Չորի եզրին ինձ է նայում հնադարեան մի ծեռակերտ :
Կիսաւեր է այդ կոթողը, մկայ ճակատը զեղեցիկ,
Ճած են թափուել, փշրուել են սիւներն ամուր, վեհ ու վերծիգ,
Եւ ամրաշէն պատերի մէջ ժամանակի ծեռքը բանդիչ
Անդունդ - ճեղքեր է բաց արել, բաժանել է բարը բարից,
Բայց հիմքը՝ կայ, հիմքի վրայ՝ հէքեաթային ու հաստատուն՝
Բարձրանում է մարմքնացած մի փառայեղ զեղեցկութիւն :

Փա՛ռք քո հոգուն, փա՛ռք քո մտքին, ժողովուրդ իմ մեծաբանքար,
Քո հանճարն է փառաբանում այս կերտուածքի ամէն մի քար :

Այս վայրկեանին՝ հոգիս լցուած է անպատում հպարտութեամբ,
Եւ յոյզերիս էլ չի իջնի վհատութեան ոչ մի սեւ ամպ .
Գո՞ւցէ թոռան ծոռան ծոռն եմ ես վարպետի այն անանուն,
Որ բարերից հիւսել է այս հէքեաթն անմեռ ու հմայուն,
Եւ ծորերում, ժայռի զլիսին, բաղաբներում հնամենի
Կերտել է լոյս - կոթողների մի աստղախումբ, որ մահ չունի :

Փա՛ռք քեզ, վարպետ իմ նախահայր, փառք քո գործին լուսապայծառ,
Դու իմ հոգում միշտ կը մնաս, որպէս ծիծղուն, ծաղկավառ ծառ :

**ԳԱՐՈՒՆ**

Թող քո յոյսը չսասանի ,
Իմ անուշիկ, իմ կակաչ,
Զմեռն ինչքան դաժան լինի՝
Կգայ գարունը կանաչ :

Զմեռն ինչքան ահեղ լինի ,
Հողմը ոռնայ՝ վայրաբար ,
Զեն ցամաքի իմ հայրենի
Աղբիւները անսպառ :

Թող՝ ժպիտըդ միշտ՝ վառ լինի ,
Խինդը՝ կարմիր՝ մի կակաչ,
Բուքը ինչքան էլ մոլեզնի՝
Կգայ գարունը կանաչ :